

'ի Կոստանդինուպօլիս եւ 'ի Չմիւռնիա զամս 10, եւ յետ դարձին իւրոյ 'ի Ս. Աթոռն՝ եկաց լուծեամբ 'ի սենեկի իւրում մինչեւ ցմահ իւր, զի ծայրագոյն կառավարիչ Աթոռոյն էր Պօղոս Եպիսկոպոս :

1840 'ի 20 Յունիսի, ժամ 11 $\frac{1}{2}$, երկրաշարժ եւ հրաբուխ 'ի Լեառն Արարատ, քանզի յանկարծ զղրգեալ սասանեցաւ երկիր, պատառեցաւ վանք Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին, ուր էր բարեհամ աղբիւր նորին, կորեան վանահայր Պետրոս վարդապետ եւ կրօնաւորք, եւ 'ի լեռնէն Մասեաց ծխեալ հրաշունչ եւ ծծբախտառն հուր, հոսեցաւ մի թեւ լերին ձիւնախառն եւ ծածկեաց զգիւղն Ակոռի հանդերձ բնակչօք եւ անասնօք, եւ կորեան անձինք 4500 : 600 Գիւրտք վրանաբնակ 2000 ոչխարօք եւ ղերծեալքն էին 107 անձինք, որք գտան յայգիս եւ յայլ տեղիս : Ի 24 Յուլիսի, դարձեալ երկրաշարժ, յորմէ բազում տեղիք աւերեցան յերեւան քաղաքի :

Գրիգոր վարդապետ Կոստանդինուպօլսեցի գտեալ ձեռագիր Աւետարան 'ի վանս Ս. Գէորգայ, որ կոչի Ղուէ վանք 'ի Սարբերդ, գրեալ ՈՂԷ (1248) 'ի Հռոմլլա, յորում գրեալ էր, առին այլազգիք ղթագաւորութիւնն Բիւզանդիոյ 'ի ձեռաց Քրիստոնէից, վասն երկիւղի նոցին հողով ծածկեցաք զգերեզման Ս. Վկային Գէորգայ, որ ետ մեզ Միքայէլ Եպիսկոպոս Առաջնորդ ուխտիս ընդ Մեղքոն Ամիրայի, որ 'ի ցեղէն Լեւոնի Թագաւորին Կիլիկիոյ, որ յուղի անկեալ էր 'ի մենաստանս Ղուէլու . լուաք զի զՍ. Եկեղեցիս մզկիթ արարին, գուցէ քակեսցեն զանգին գանձն զոսկերս Ս. Գէորգայ, որ բազում փառաքանօք գտեալ թաղեցաք 10 կրօնաւորքս յաջ կողմն մեծի խորանին եւ 'ի փոքրիկ մատրոն եղաք գերեզման նոր (249) (1344) ընդ հուպ այս ինչ քարի : Գրիգոր եւ Գէորգ վարդապետք բըրեալ զնշանակեալ տեղին գտին մի արկղ 2 թզաչափ, կըրկին պատեալ մոմպատ կտաւօք, եւ իրեւ բացին զարկղն բուրեաց անտի հոտ անուշ, եւ գտին 'ի նմա Մասունս սըրբոց կնքեալ մեծամեծ կնքով, եւ զանուանս Սրբոց գրեալ 'ի մագաղաթի եւ պատեալ մոմպատ կտաւօք, եւ այլ մի վկայ երեք սեաւ մեծամեծ կնքով, թէ ո՞րպէս եկն եւ ո՞րպէս եկաց անդ . (յ3 Յուլիսի, 1839) :